Արձանագրության 3
Լուսավորվող ցուցանակների վերանորոգման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման
« ԵՔ-ԳՀԾՁԲ-19/115» ծածկագրով գնման ընթացակարգի
հանձնաժողովի նիստի

ք. Երևան 26.06.2019թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Մամաուլյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Սարգսյան, Գ.Դալլաքյան
Վ. Գևորգյան, Տ. Պողոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ն. Մամաուլյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ն. Մամաուլյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ՍԻԳՄԱ-ՏԵԼ »ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

3. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/115 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ն. Մամաուլյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ ԵՔ-ԳՀԾՁԲ-19/115 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ՍԻԳՄԱ-ՏԵԼ »ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացնել **«Լուսավորվող ցուցանակների վերանորոգման և սպասարկման» ծառայությունների** մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ,

3.2 Հաշվի առնելով, որ ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ անգործության ժամկետ կիրառելի չէ :

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ն. Մամաուլյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:20-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5,դեմ - 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝	----------	Ն. Մամաուլյան
Անդամներ՝	----------	Մ. Սարգսյան
	----------	Գ.Դալլաքյան
	----------	Վ. Գևորգյան
	----------	Տ. Պողոսյան
Քարտուղար՝	----------	Ի. Եղիազարյան